



**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Վարկի տրամադրման պայմաններ**

<b>Սկսած 2019թ.-ի Հունիսի 3-ից վարկը տրամադրվում է ՀՀ դրամով ներքոնշյալ պայմաններով</b>		
<b>ՀԱՃԱՆՈՐԴԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ</b>		
Վարկատեսակ	«Սպառողական թեթև»	«Գյուղ թեթև»
Վարկառուի տարիք և ռեզիդենտություն	21-ից 70 տարեկան ՀՀ քաղաքացի կամ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր: Ընդ որում, դիմելու պահին հաճախորդի տարիքը, գումարած ակնկալվող վարկի ժամկետը չի կարող գերազանցել 70 տարեկանը:	
<b>ԱՐԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ</b>		
Վարկի նպատակ	Վարկը նախատեսված է հաճախորդի կենսապայմանների բարելավման և այլ սպառողական նպատակների համար:	Վարկը տրամադրվում է շրջանառու և հիմնական միջոցների համալրման, ինչպես նաև գյուղատնտեսական այլ կարիքների համար:
	Վարկառուն վարկային միջոցները ստանալիս պետք է գործի իր անունից և իր օգտին: Արգելվում է վարկ վերցնել ի օգուտ երրորդ անձի:	
Վարկի տրամադրման արժույթ	ՀՀ դրամ	
Վարկի գումար	150 000 – 500 000	
Վարկի տրամադրման ժամկետ (նվազագույն և առավելագույն)	6 – 24 ամիս	
Տարեկան անվանական տոկոսադրույք	14,9%	
Վարկի տրամադրման վճար վարկը բանկերի միջոցով ստանալու դեպքում կամ կանխիկ տրամադրման վճար վարկը վարկատուի դրամարկղից կանխիկ ստանալու դեպքում: Հաշվարկվում է վարկի մայր գումարից:	3%–3,5%*	3,5%
Վարկի սպասարկման ամենամսյա վճար (հաշվարկվում է վարկի մայր գումարից)	1,35%– 1,7%*	1,35%
	* գրանցված աշխատավարձ ունենալու դեպքում 3%, այլ դեպքերում՝ 3,5%	
	* գրանցված աշխատավարձ ունենալու դեպքում 1,35%, այլ դեպքերում՝ 1,7%	

Վարկի տրամադրման եղանակ	Կանխիկ, անկանխիկ	
Վարկի մարման եղանակ	Անուիտետային ամենամսյա մարումներ (վարկը վճարվում է վարկի գումարի, տոկոսագումարի և սպասարկման գումարի (առկայության դեպքում) հանրագումարից կազմված հավասարաչափ մասերով):	
Արտոնյալ ժամկետ	Մինչև 3 ամիս	Մինչև 6 ամիս
Վարկի ապահովություն	Չի պահանջվում, եթե վարկային կոմիտեն չի ներկայացրել այլ պահանջ	
Տրանշեր	Տրանշեր կիրառելի չեն	
Ջուզահեռ վարկեր	Ջուզահեռ «Սպառողական Թեթև» վարկեր չեն տրամադրվում	Մեկ հաճախորդի զուգահեռ «Գյուղ Թեթև» վարկերի առավելագույն քանակը՝ 2 է, իսկ առավելագույն գումարը՝ 500 000 ՀՀ դրամ
	ՖԻՆԶՍ-ի ակտիվ հաճախորդների համար, ովքեր ունեն այլ վարկեր, որևէ սահմանափակում չի գործում	
Վարկի վաղաժամկետ մարման պայմանները	Վարկառուն, <b>ԱՌԱՄՑ</b> տուժանք վճարելու, իրավունք ունի վաղաժամկետ ամբողջական կամ մասնակի մարելու վարկը և կատարելու պայմանագրով նախատեսված պարտականությունները: Ընդ որում.	
	✓ Վարկը վաղաժամկետ ամբողջական մարելու դեպքում վարկառուն վճարում է վճարման օրվա դրությամբ հաշվարկված վարկի սպասարկման և այլ վճարները, տոկոսները և վարկը,	
	✓ Վարկի վաղաժամկետ մարման պարագայում՝ գանձվում է վարկառուի մարման ժամանակացույցով սահմանված առաջիկա մարման ենթակա ամբողջ գումարը, իսկ եթե կատարվող վճարումը գերազանցում է առաջիկա մարմանը ենթակա գումարի չափը, ապա այդ գերազանցող մասն ուղղվում է վարկի մարմանը: Իսկ այն դեպքում, երբ գումարը չի բավարարում մարել վարկառուի մարման ժամանակացույցով սահմանված առաջիկա մարման ամսաթվի ամբողջ գումարը, ապա մարումը կատարվում է հետևյալ հերթականությամբ՝ 1. սպասարկման և այլ վճարներ, 2. տոկոսներ, 3. վարկ,	
✓ Վարկառուն իր ցանկությամբ կարող է կատարել մարման ժամանակացույցով նախատեսված հետագա ամիսների վճարումները: Այդ դեպքում մարումները կկատարվեն հետևյալ հերթականությամբ. 1. հետագա ամիսների սպասարկման և այլ վճարներ, 2. վճարման օրվա դրությամբ հաշվարկված տոկոսներ, 3. վարկի մնացորդային գումարի հանդեպ հաշվարկվող հետագա ամիսների տոկոսներ, 4. հետագա ամիսների վարկի գումար: Վարկառուն հետագա ամիսների համար կատարված մարումների չափով ազատվում է վճարումներ կատարելուց մարման ժամանակացույցով նախատեսված օրերին:		
<b>ՏՈՒՂԱՆՔՆԵՐ</b>	<b>!</b> Վարկառուի կողմից մարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում պարտավորությունները չկատարելու դեպքում վարկառուն պարտավորվում է վարկատուին վճարել տուժանք՝	
	1. յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար ժամկետանց (չվճարված) վարկի գումարի նկատմամբ օրական 0.13%-ի չափով, և	
	2. յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար ժամկետանց (չվճարված) տոկոսագումարի նկատմամբ օրական 0.13%-ի չափով:	
<b>!</b> Վարկառուի կողմից վարկային պայմանագրի մարման ժամանակացույցով սահմանված վարկի գումարի վճարման ժամկետները խախտելու (կետանցի) դեպքում պայմանագրով նախատեսված վարկի տարեկան տոկոսադրույքի հաշվարկումը ժամկետանց վարկի նկատմամբ դադարում է և վճարման ենթակա		

	<p>ժամկետանց վարկի գումարի նկատմամբ՝ կետանցի օրվանից մինչև վճարման ենթակա ժամկետանց վարկի փաստացի մարման օրը, սկսում է հաշվարկվել տոկոս՝ տարեկան 24 տոկոս (քսանչորս տոկոս) տոկոսադրույքի չափով: Վարկառուի կողմից վարկի և տոկոսների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության և վճարված գումարների անբավարարության դեպքում, պարտավորությունները մարվում են հետևյալ հերթականությամբ՝ առաջին հերթին մարվում են պարտավորության կատարման ստացմանն ուղղված վարկատուի ծախսերը, այնուհետև սպասարկման վճարները, հաշվեգրված տուժանքները, տոկոսները և վարկի գումարը:</p>
<p>Վարկ ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել փաստաթղթերի հետևյալ ցանկը</p>	<p>Պարտադիր պահանջվող փաստաթղթեր</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Նույնականացման քարտ կամ անձնագիր և սոցիալական ապահովության քարտ (հանրային ծառայությունների համարանիշ),</li> <li>✓ Վարկային կոմիտեի որոշմամբ կարող են պահանջվել նաև այլ հիմնավորող փաստաթղթեր:</li> </ul>
<p>Վարկի տրամադրման ժամկետներ</p>	<p>Վարկային հայտի վերաբերյալ կազմակերպությունը որոշում է կայացնում առավելագույնը 1 աշխատանքային օրում, իսկ վարկը վարկառուին փաստացի տրամադրվում է վարկը հաստատվելուց հետո առավելագույնը 1 աշխատանքային օրում:</p>
<p>Վարկի տրամադրման դրական որոշման համար անհրաժեշտ գործոններ</p>	<ul style="list-style-type: none"> <li>✓ Հավանական հաճախորդի բնակության վայրի առկայություն ֆինբլ-ի մասնաձյուղերի ցանցի սպասարկման տարածքում,</li> <li>✓ Բավարարող վարկային պատմության առկայություն՝ վարկի համար դիմելու պահի դրությամբ դասակարգված պարտավորությունների՝ (վարկեր, երաշխավորություններ) բացակայություն, բացառությամբ ստանդարտ դասի,</li> </ul> <p>«Գյուղ Թեթև» վարկերի համար նաև.</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Նվազագույնը 3 ամսվա անդադար գյուղատնտեսական գործունեություն,</li> <li>✓ Համապատասխանություն ֆինբլ-ի-ի սոցիալական և բնապահպանական ստանդարտներին:</li> </ul> <p>Սպառողական «Թեթև» վարկերի համար նաև.</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Հաստատված ամսական եկամտի առկայություն առնվազն նախորդ 6 ամիսների ընթացքում,</li> </ul>
<p>Վարկի մերժման գործոններ</p>	<ul style="list-style-type: none"> <li>✓ Վարկունակության անբավարար մակարդակ,</li> <li>✓ Վատ վարկային պատմություն</li> <li>✓ Ֆինբլ-ի նվազագույն պահանջներին անհամապատասխանություն</li> <li>✓ Այլ վարկային ռիսկեր</li> </ul>
<p><b>ԶԳՈՒՇԱՑՈՒՄ</b></p>	<p>Այս վարկի անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել ֆինբլ-ի կողմից:</p> <ul style="list-style-type: none"> <li>! Ֆինբլ-ն իրավունք ունի վարկի տոկոսադրույքը միակողմիանի կարգով փոփոխել՝ վարկառուի կողմից պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման դեպքում, պայմանագրով և պայմանագրի անբաժանելի մասը կազմող պայմաններով նախատեսված դեպքերում և կարգով,</li> <li>! Վարկի տոկոսադրույքի հաշվարկային դրույթը ենթակա է փոփոխման մինչև «+5» տոկոսային կետով, բայց ոչ ավել քան &lt;&lt; կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույթի կրկնապատիկ,</li> <li>! Փոփոխության վերաբերյալ վարկատուն ծանուցում է վարկառուին տվյալ փոփոխությունն ուժի մեջ մտնելուց 7 (յոթ) աշխատանքային օր առաջ</li> </ul>

	<p><b>!</b> Ձեր գույքը (տուն, մեքենան և այլն) կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե Դուք ժամանակին չկատարեք Ձեր վարկի տոկոսագումարների և վարկի գումարի մարումները,</p>
	<p><b>!</b> Ձեր կողմից տոկոսագումարների և վարկի գումարի մարումները ժամկետին չվճարելու դեպքում Ձեր մասին տեղեկատվությունը կգրանցվի վարկային ռեգիստրում,</p>
<p>Վարկի տրամադրման վայր</p>	<p>Վարկը կարող է ձևակերպվել ՖԻՆՔԱ-ի ցանկացած մասնաձյուղում:</p>

## ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարծենա վարկը Ձեզ համար՝ տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը կախված է վարկի պայմաններից (գումար, ժամկետ, վարկի մարմանն ուղղված վճարների գումար և մարումների քանակ)

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

A վարկի գումարը (վարկատուի կողմից վարկառուին տրամադրված վարկի սկզբնական գումարը)

n վարկի մարմանն ուղղված վճարի թիվը

N վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը

Kn վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը

Dn վարկի տրամադրման օրից մինչև վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով

i տարեկան փաստացի տոկոսադրույքը, որը կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են վարկավորման պայմանագրից կամ այլ կերպ

## Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակներ

«Սպառողական Թեթև»	
Եկամուտ	Գրանցված աշխատավարձ
Վարկի գումար	500 000 ՀՀ դրամ
Անվանական տարեկան տոկոսադրույք	14,9%
Վարկի ժամկետ	24 ամիս
Վարկի տրամադրման միանվագ վճար	վարկի գումարի 3%
Սպասարկման ամենամսյա վճար	վարկի գումարի 1,35%
Մարումներ	ամենամսյա հավասարաչափ մարումներ (մայր գումարը և տոկոսները միասին)
Վարկի տրամադրման օր	01 հունիս 2019 թ.
Առաջին մարման օր	01 հունիս 2019 թ.
<b>Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 55,2%</b>	
«Գյուղ Թեթև»	
Վարկի գումար	500 000 ՀՀ դրամ
Անվանական տարեկան տոկոսադրույք	14,9%
Վարկի ժամկետ	24 ամիս
Վարկի տրամադրման միանվագ վճար	վարկի գումարի 3,5%
Սպասարկման ամենամսյա վճար	վարկի գումարի 1,35%

Մարումներ	18 ամիս ամենամսյա հավասարաչափ մարումներ (մայր գումարը և տոկոսները միասին) և 6 արտոնյալ ամիս (միայն ամսական տոկոսների վճարում)
Վարկի տրամադրման օր	01 հունիս 2019 թ.
Առաջին մարման օր	01 հունիս 2019 թ
<b>Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 55,4%</b>	